**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 07.02.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/09

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Տեսակենտրոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տեսակենտրոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Հովհաննիսյանի, Հ. Սնխչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցում, հանդերձանքի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-26/1-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/759-2020 գրությամբ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.01.2020թ. թիվ ՊՆ/02/138-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 24.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.02.2020թ.-ին:

### 2. <u>ՀՀ պաշտպանության նախարարություն-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, 20.01.2020թ.-ին թիվ ՊՆ/02/138-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

*«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-26/1-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. հունվարի 14-ին միակողմանի լուծել է ԳՀԱՊՁԲ-26/1-1 պայմանագիրը:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 15.01.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:*

*Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:»:*

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

**3. <u>«Տեսակենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 29.01.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/759-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով նաև հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

*««Տեսակենտրոն» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 06.06.20Т9 թ-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-26/1-1 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) մեր կազմակերպությունը ստանձնել էր պարտավորություն մատակարարելու 2 հատ գալարափող և 10 հատ ֆլեյտա: 2019թ. հունիսի 25-ին Պայմանագրում նշված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքները մատակարարվել են ՀՀ ՊՆ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 54 հասցեում գտնվող զորամաս: Մեզ տեղեկացրել են, որ ապրանքները ՀՀ ՊՆ համապատասխան աշխատակիցների կողմից չեն ընդունվել առանց որևէ հիմնավոր պատճառաբանություն նշելու: Մեր կողմից 28.06.19թ. ապրանքները հետ են վերցվում պատվիրատուի մոտից և գրությամբ նույն օրը դիմում ենք ՀՀ ՊՆ բացատրություն ստանալու համար (գրության պատճեն կցվում է):*

*Այնուհետև 02.08.2019թ. ստացել ենք Պայմանագրերի վերաբերյալ արձանագրություններ (արձանագրությունները կցվում են), որոնց հետ համաձայն չենք և 06.08.19թ. ներկայացրել ենք մանրամասն առարկություններ (գրության պատճեն կցվում է): Այնուհետև 14.11.2019թ. հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել են, որ ներկայանանք ՀՀ ՊՆ մեզ ուղղված գրությունը ստանալու համար: Ստացել ենք 21.10.19թ. օրվա դրությամբ գրված գրություն ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի կողմից այն մասին, որ*

*2019թ. հուլիսի 31-ի 2036/ԳՇ գրությամբ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի տեղակալ, պարոն Գ. Աֆրիկյանին ուղարկվել է առաջարկ Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությանը հատկացնել երկու ամիս ողջամիտ ժամկետ՝ մատակարարված «Ֆլեյտա» և «Գալարափող» երաժշտական փողային գործիքները պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանող երաժշտական գործիքներով փոխարինելու համար: Հարկ ենք համարում նշել, որ որևէ գրություն մինչ այդ Պայմանագրի ժամկետի վերաբերյալ չենք ստացել:*

*Ձեր կողմից ծանուցում ստանալուց հետո տեղեկացել ենք, որ Պայմանագիրը միակողմանի լուծվել է ՀՀ ՊՆ-ի կոմից այն պատճառաբանությամբ, որ 2019թ. դեկտեմբերի 1-ի գրությամբ երաժշտական գործիքները չեն փոխարինվել:*

*Հաշվի առնելով վերոգրյալ ողջ տեղեկատվությունը, այն մասին, որ ՀՀ ՊՆ-ն գործել է ոչ իրավաչափ ակնկալում ենք Ձեր անաչառ միջամտությունը խնդրին լուծում տալու և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի 25 տարվա բարի համբավը անհիմն պատճառաբանություններով չվարկաբեկելու համար՝ խոչընդոտելով վերջինիս և միջազգային գործընկերների հետ հարաբերություններին:»:*

**4. <u>ՍՑ-LO-2020/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-26/1-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 30.06.2019թ.-ը:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

21.10.2019թ.-ին Պատվիրատուն թիվ ԴՎԱ/4455 գրությամբ Մասնակցին տեղեկացրել է 10.10.2019թ.-ի ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի գրության վերաբերյալ, որում մասնավորապես նշվել է, որ թույլատրվում է ՀՀ ԶՈԻ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի և «Տեսակենտրոն» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊԶԲ-26/2-1 ծածկագրով պայմանագրի գնման ժամանակացույցով սահմանված ապրանքատեսակները ժավկեւոից ուշ մատակարարելը և դրանց ընդունման գործընթացի կազմակերպումը ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականի համաձայն:

Միաժամանակ Մասնակիցը տեղեկացվել է, որ ս.թ. հուլիսի 31-ի 2036/ԳՇ գրությամբ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի տեղակալ, պարոն Գ. Աֆրիկյանին ուղարկվել է առաջարկ՝ ԳՀԱՊԶԲ-26/1-1 պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությանը հատկացնել երկու ամիս ողջամիտ ժամկետ՝ մատակարարված «Ֆլեյտա» և «Գալարափող» երաժշտակաւն փողային գործիքները պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանող երաժշտական գործիքներով փոխարինելու համար:

Վերոնշյալ գրությունը Մասնակից կողմից ստացվել է՝ 21.10.2019թ.-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 15.01.2020թ. հրապարակված թիվ «ԳՀԱՊԶԲ-26/1-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊԶԲ-26/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.01.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը՝ 30 օրից ավելի):

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/759-2020 գրությամբ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ ամսի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետ համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար

պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-26/1-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 30.06.2019թ.-ը:

21.10.2019թ.-ին Պատվիրատուն թիվ ԴՎԱ/4455 գրությամբ Մասնակցին տեղեկացրել է 10.10.2019թ.-ի ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի գրության վերաբերյալ, որում մասնավորապես նշվել է, որ թույլատրվում է ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի և «Տեսակենտրոն» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-26/2-1 ծածկագրով պայմանագրի գնման Ժամանակացույցով սահմանված ապրանքատեսակները ժավկեւոից ուշ մատակարարելը և դրանց ընդունման գործընթացի կազմակերպումը ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարականի համաձայն:

Միաժամանակ Մասնակիցը տեղեկացվել է, որ ս.թ. հուլիսի 31-ի 2036/ԳՇ գրությամբ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի տեղակալ, պարոն Գ. Աֆրիկյանին ուղարկվել է

առաջարկ՝ ԳՀԱՊՁԲ-26/1-1 պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն «Տեսակենտրոն» ՍՊ ընկերությանը հատկացնել երկու ամիս ողջամիտ ժամկետ՝ մատակարարված «Ֆլեյտա» և «Գալարափող» երաժշտակաւն փողային գործիքները պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանող երաժշտական գործիքներով փոխարինելու համար:

Վերոնշյալ գրությունը Մասնակից կողմից ստացվել է՝ 21.10.2019թ.-ին:

www.gnumner.am համացանցային կայքում 15.01.2020թ. հրապարակված թիվ «ԳՀԱՊՁԲ-26/1-1» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի միջև 06.06.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-26/1-1» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 14.01.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը՝ 30 օրից ավելի):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Տեսակենտրոն» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 14.01.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 15.01.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուի կողմից ողջամտորեն սահմանված ապրանքի մատակարարման նոր ժամկետում Մասնակիցը չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը:

Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած 13.07.2019թ.-ի և 16.07.2019թ.-ի մասնագիտական եզրակացությունները չեն կարող սույն գործով էական նշանակություն ունեցող փաստ հանդիսանալ, քանի որ դրանցով չի ապացուցվում Պատվիրատուին մատակարարված ապրանքի պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք լինելու հանգամանքը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ընդ որում՝ հարկ է փաստել, որ Մասնակիցը, 21.10.2019թ.-ին ստանալով Պատվիրատուի 21.10.2019թ.-ի թիվ ԴՎԱ/4455 գրությունը, անգործություն է դրսևորել՝

չձեռնարկելով համապատասխան միջոցներ իր ենթադրյալ խախտված իրավունքների վերականգնման կամ դրանց պաշտպանության համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով սահմանված (Պատվիրատուի կողմից տրամադրված) ժամկետում չի մատակարարել նախատեսված ապրանքները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/759-2020 գրությամբ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/09 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**